ԿԱՐԾԻՔ

Վերոնիկա Աշոտի Թորոսյանի «Եվրասիականաության ռուսական և թուրքական հայեցակարգերը. համեմատական վերլուծություն» թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Գաղափարախոսությունները և դրանց առավել մշակված տարբերակները մշտապես կարևոր դեր են խաղացել քաղաքական գործընթացներում, պետությունների արտաքին ու ներքին քաղաքականության, պետություն-հասարակություն հարաբերությունների և տարբեր այլ ոլորտներում: Սակայն գաղափարախոսությունները նաև ենթարկվում են վերարժևորումների, փոփոխությունների, ռեբրենդինգի և հատկապես 21-րդ դարում այս երևույթները առավել քան ակնառու են: Միևնույն ժամանակ, տեղի են ունենում որոշակի գաղափարախոսությունների ազդեցության նվազում, սիմվոլիկ գոյություն և ի վերջո, քաղաքական ասպարեզից հեռացում:

Ներկայացված ատենախոսությունը նվիրված է ներկայումս ակտիվ տեսական և գործնական քննարկումների, կիրառման, փորձարկումների փուլում գտնվող եվրասիականությանը: Ընդ որում, ատենախոսը իրականացրել է համեմատական վերլուծություն դիտարկելով ռուսական և թուրքական եվրասիականությունները: Մեր կարծիքով, ատենախոսության համար ընտրված թեման իր բնույթով նոր է, ունի արդիական, ինչպես նաև կիրառական բազմաոլորտ նշանակություն: Նկատենք նաև, որ թեման բավականին բարդ է և ատենախոսին հաջողվել է իրականացնել գիտականորեն հիմնավորված և տրամաբանական հստակ շղթայի մեջ գտնվող աշխատանք:

Ատենախոսության երեք գլուխներից առաջինում տրվում է եվրասիականության ձևավորման հիմքերն ու զարգացման փուլերը բնականաբար կենտրոնանալով այդ գաղափարախոսության ռուսական և թուրքական տարբերակների վրա: Երկրորդ գլխում ատենախոսը հանգամանալից քննել է եվրասիականության հայեցակարգերի հիմնական հատկանիշները թուրքական և ռուսական իրականություններում: Գովելի է, որ հստակ անդրադարձ կա քաղաքական աշխարհագրությանը: Բավական ուշագրավ են ազգայնականության և եվրասիականության հարաբերակցության խնդրի քննությունը, կրոնի դերի շուրջ դիտարկումները: Երրորդ գլխում քննության են առնվել եվրասիականության գաղափարների գործածումը Ռուսաստանի և Թուրքիայի տարածաշրջանային ինտեգրացիոն նախագծերում երկու կառույցների՝ ԵՏՄ-ի ու ԹՊԿ-ի օրինակով: Գլխի վերջին ենթագլուխը նվիրված է ռուս-թուրքական հարաբերություններին, բայց

եվրասիականության դիտանկյունից: Վերջում ներկայացված են եզրակացությունները և բազմալեզու ու տպավորիչ օգտագործված աղբյուրների և գրականության ցանկը:

Ցանկանում ենք նշել, որ ատենախոսը հստակ և տրամաբանված է ներկայացրել թեմայի արդիականությունը, աշխատանքի նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև ժամանակագրական սահմանները: Ատենախոսությունը նաև աչքի է ընկնում ինքնուրույնությամբ և գրագետ շարադրանքով:

Աշխատանքի հետ կապված ունենք որոշ դիտարկումներ և առաջարկներ.

1. Չնայած որ թեման ենթադրում է եվրասիականության տեսաբանների աշխատություններին համակողմանի անդրադարձներ, սակայն երբեմն բավական շատ է տեղ տրված տարբեր մասնագետների տեսական աշխատանքների, նրանց հայացքների ներկայացմանը, իսկ ատենախոսի գնահատականները կամ բացակայում են, կամ ավելի ստվերում են:

2. Ցանկալի կլիներ, որպեսզի ատենախոսը անդրադարձ աներ նաև Ալեքսանդր Դուգինի տարբեր տեսական հայացքների և կանխատեսումների չիրականացմանը, տապալմանը: Ի դեպ, վերջերս հենց Դուգինն է հանդես եկել խոստովանությամբ, որ իր որոշակի թեզեր և կանխատեսումներ, փաստորեն, սխալ են:

3. Ատենախոսության մեջ թուրքական եվրասիականության մասին խոսելիս բնականաբար շատ են հիշատակվում Դոդու Փերինչեքը և նրա որդի Մեհմեթ Փերինչեքը: Սակայն, ցանկալի կլիներ նաև գոնե հպանցիկ անդրադարձ կատարվեր նրանց կերպարին: Մասնավորապես Դոդու Փերինչեքը երկար տասնամյակներ Թուրքիայում ընկալվում է որպես ոչ միանշանակ կերպար, տարատեսակ իրադարձությունների մեջ, մեղմ ասած, կասկածելի պահվածքով ու ներգրավվածությամբ, իսկ Մեհմեթ Փերինչեքը համարվում է Հայոց ցեղասպանության փաստի դեմ ամենաակտիվ գործունեություն ծավալողներից մեկը, որն իր ուսումնասիրությունների մի մասն, ի դեպ, իրականացրել է Ռուսաստանում և ռուսական արխիվային փաստաթղթերի հիման վրա:

4. Ատենախոսության մեջ հանդիպում է «Հյուսիսային Կիպրոսի թուրքական Հանրապետություն» եզրույթը, սակայն չի նշվում դրա չճանաչված լինելը, կամ կարելի էր այդ անվանումը վերցնել չակերտների մեջ:

5. Աշխատանքում հանդիպում են եզակի թվով վրիպակներ /էջ 122/, ոչ հաջող ձևակերպումներ /էջ 121/, կամ օտար լեզուներից ուղիղ թարգմանություններ /էջ 67/

Նշված դիտարկումները, սակայն, բացարձակապես չեն ազդում աշխատանքի ընդհանուր բնույթի վրա. այն իրականացված է գիտական պատշաճ մակարդակով, արդիական է և պարունակում է գիտական նորույթ: Թեմայի վերաբերյալ ատենախոսի հրապարակված հոդվածները և սեղմագիրը արտացոլում են աշխատանքի դրույթները: Ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳ կոմիտեի պահանջներին, իսկ ատենախոսը՝ Վերոնիկա Աշոտի Թորոսյանը արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի՝ Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ռուբեն Հովհաննեսի Մելքոնյան

02.07.2026 թ.

Ռուբեն Մելքոնյանի ստորագրությունը հաստատում եմ:

ԵՊՀ գիտքարտուղար՝ բ.գ.թ., դոցենտ Մ. Հովհաննիսյան